


նան։ Առաջինը միայն Աւոտումն։ Խորհուրդէն ստորագրուած և
Ս. Պատրիարքէն հաստատուած պիտի ըլլայ, իսկ վերջին երկու
աստիճանի վկայագիրները նախապէս պիտի ստորագրուին նոյն
այդ գաւառնթացքներուն լեզուաց և գիտութեանց ուսուցիչներ
ու կողմէն, յետոյ պիտի վաւերացուին Աւոտումն։ Խորհուրդէն
և հաստատուին Պատրիարք Սրբազանին կողմէ։



ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Հայ զիւղը.—Գիւղի դպրոցն ու նորա տիովը.—Կրթական ու բժշկա-
կան գործը զիւղում.—Հայ կնոշ դերը հայի կուլտուրական կենարում—

Մենք մոռանում ենք գիւղը. շարունակ ժողովրդից խօսե-
լով մենք միմիայն նորա կատարներով ենք զբաղուած, իսկ ար-
մատի, ընի վրայ նայում ենք անցողակի։ Եւ իրաւ՝ ի՞նչ է ներ-
կայացնում այժմեան հայ գիւղը. մե յետամնաց, խաւար խորշ
մեր իրականութեան մէջ այն միջոցին, երբ մեր կենտրոններում
եռում է կեանքը իւր բոլոր կողմերով։ Բուռն ձգտումը վառ
գործունէութեան քաշել է մեր ինտելիգէնցիան գէպի կենտրոն-
ները, ուր վերջին տարիների մամուլի ու գործունէութեան հա-
մեմատական տպատութեան շնորհիւ, լայն ասպարէզներ էին
բացւում նոցա առաջ ուղղութիւնների, տեսութիւնների ալե-
ծուփի հոսանքների մէջ եռանգաղին մցելու. ու կենտրոնների
մտաւոր, գրական հասարակական ասպարէզը հեղեղւում էր
բազմատեսակ գործիչներով։

Միւս կողմից գիւղի մտաւոր և բարոյական բարձրացման
աղաղակող անհրաժեշտութիւնը անժխտելի փաստէ։ Իսկ ամե-
նակարճ ճանապարհը գիւղական մտաւոր ճահճը ցամաքեցնելու
— այդ անշուշտ կըթութիւնն է, գլուցն է։ Եւ հէսց այդ կողմից
է, որ մի տխրալի պատկեր է ներկացնում մեր երկիրը։ Վերցը ք
կովկասի գիւղերը՝ քանի՞որ նոցանից գլուց ունին և եղածներն
էլ մէծ մասամբ ի՞նչ ողորմէլի վիճակի մէջ են մանաւանդ տնտե-
սապէս։ Ու մինչ կենտրոններում քաղաքացուն ժողովրդական
համալսարանի պայծառ լուարաններում իւր հոգեկան պահանջ-
ներին բաւարարութիւն տալու յարմարութիւններ են արուած,

հայ գիւղացին տարրական դպրոց անդամ չունի: —

Սակայն ժամանակ է օդնելու գիւղացուն, զարթեցնելու նորա թմրած հոգին, ժամանակ է մեր ժամաւոր վեցքի բժշկութիւնը արմատից ոկուլու և ամենից առաջ տալու գիւղացուն դպրոց: այս', հայ գիւղացին դպրոց չունի: —

Ոչ մի վսեմ ատենաբանութիւն և ոչ մի մանրազննին վերլուծական չքնազ գիւղ ժողովրդի որտել լարեզին չի զարկի, քանի որ նա անգրագետ է, քանի որ նա զուրկ է ամենատարբական կրթութիւնից: Որպէսողի կանոնաւորութ գիւղացու սոցիալական — հանրական պայմանները — տուէք գիւղին ամենից առաջ դպրոց: այս պահանջ է այժմ և բարոյական մեծ պարագ ամենքին վրայ: —

Ահա այս տեսակէտից վերին աստիճանի մխիթարական երեսյթ է, որ վերջերս Բաքուի Կուլտուր. Միութիւնը զգալով պահանջի անհրաժեշտութիւնը, ձեռնարկել է մի շարք գլուխուններ բանալու հայոց Բաք, Ընկ գերը հայ ժողովրդի մէջ Կուլտուրայ պատուաստելու գործում: այդ պատկառելի ընկերութիւնը իւր ամբողջ անցեալով մեր ազգացին նշանաւոր գործօններից մէկն է եղել և պիտի լինի այժմ: Նա ունի արդէն իւր տրամադրութեան տակ գրուած միջոցներ այդ մասին. յիշենք Անանեանի 20,000 ռուբլու կտակը, Աֆրիկեանի 10 գլուխուների ու նպաստների յանձնումը ընկերութեան, և ընկերութեան վերջերս արած որոշումն — գալ ուսումնական տարրուանից բանալ հնարաւոր շափով շատ գիւղական դպրոցներ: Այս', պէտքէ բանալ և աշխատել ձեռք բերել նոր նպաստներ — միջոցներ այդ ուղղութեամբ: — Եթանի թէ հայ ժողովուրդը տնտեսական — սոցեալական այնպիսի պայմանների մէջ տրուած լինէր, որ հողը հողագուշտին — գեղջկին պատկանէր, այն ժամանակ նա կարիք էր չէր ունենայ մեր «ողորմած նպաստներին» գուցէ, սակայն այս յապաղման գործնականութիւնը պաշտպանելը գատապարտելի կլինէր:

Լուրջ հարցէ իհարկէ թէ՝ ի՞նչ տիպի և ուղղութեան պէտքէ վերածել մեր գիւղական դպրոցները: Այս մասին խօսել են, կիսուան, բայց ցարդ որեւէ լուրջ վերաբերմունք գործին չէ եղած: Պէտք է, անհրաժեշտ է մշակել մեր գիւղական դպրոցների պատկերը, տիպը, իւր որոշ, հաստատուն ծրագրով, իւր բռնելիք ուղղութեամբ, ունենալիք դասընթացքով: — Լսեցինք որ մեր այս կրթական կարևոր հարցի մասին վերջերս Հայ, Բաք, Ընկ, վարչութիւնը մասնաւոր խօսհրդակցութիւն է կազմել Թէֆլի-

ոռւմ, գործին հմուտ մասնագէտներից, որին ներկայ են եղել նաև մեր երկու առաջնակարգ կրթական հաստատութեանց ղեկավարները — ձեմաքանի ու ներսինեան գպրանոցի ար ար, առեսուչները: Խօսճրդի մէջ հարցերը դրուել են պարզ և որոշ թէ՝ ի՞նչ տիպի լինին մեր գպրանոցները — ծխական եկեղեցական, հասարակական ընդհանուր կրթական, թէ մասնագիտական և այլն: Կարծիքները եղել են իհարկէ թերեգէմ: Մեծամասնութիւնը յանդել է ծխական ընդհանուր կրթական տիպի որոշման: Հէնց այս խորհրդակցութիւնը պարզ ցայց է առելու մեր գպրանոցների էութեան անորոշութիւնը:

Անուբանալի փաստ է իհարկէ, որ մեր գպրանոցները զուրկ են նաև որևէ կոնտրոլից: ընդհանուր ուղղութիւն տուող, գործը կանոնաւորող, լրացրող գէպըերում վճռող և հասաւատող մի հիմնարկութիւն չունենք: Մեր ամենայն ինչը «եօլս է գնում» միմիայն և մեր եղած գպրանոցներում տիրում է կոտարեալ անսարսիա: Ոչ ոք մեզանից (բացառութեամբ ի հարկէ մարմնաւոր հշխանութիւնից) գործող գործոցներից տեղեկութիւն չունի: Կաթուղիկոսական կոնդակով Ռւսումնական Յանձնաժողով հառատելու կարգադրութիւն ելաւ և ամեն ինչ մնաց թղթի վրայ: Ժամանակ է վերջապէս մտածելու և այդ մասին: —

Գպրոցին համաւասար կարիք ունի գիւղը և բժշկական օգնութեան: Այս կովմից հայ գիւղի պատկերը վշտակի լինելուց բացի չափագանց ամօթաքեց է: Հայ գեղջկուհին և հայ դիւջացին բժշկութեան բացակայութեան կոհեր են: Գիւղը չունի և բժիշկ, գիւղը չունի և հիւանդանոց: ցաւն ու համաճարակը հնձում են մեզ մեր արմատից, մեր կենուունակ տարրը լուծում: Զի կամելի մոռացութեան տալ անշուշտ հայ գիւղացու նախապաշտումունքները բժշկութեան վերաբերեալ, բայց նախապաշտումունքները այժմ, ժամանակի լուսոյ հզօր ճառագայթների տակ կիսում է հալուել են: Գիւղեր կան, ուր ճննդաբեր հայ կոտը ո՛չ միայն մանկաբարձուհու են վստահանում, այլ նաև այր օժշիք: և վերջապէս գպրոցը զուգընթացաբար արմատախիլ պէտք է անէ գեղջկի անվատահութիւնը գէպի բժշկականութիւնը: բայց չէ որ լիովին հաստատութիւններին պէտք է հետևին բժշկականները իրենց գեղատներով:

Ի հարկէ երբ կմտնի Կովկասում ևս զէմուտվօն, երբ նորակազմութերպութիւնները կցանցաղատեն նաև մեր գիւղերը, երբ հառարակութիւնը թնքը, ինչպէս Ռուսաստանում, կանցնի արդօրինակ հառատատութիւնների գլուխը, կրացուին նաև հիւան-

դանոցներ, կրազմանայ ժողովրդական քժիկների թիւը և կրթական ու այլ հաստատութեւնները պետութիւնից աւելի միջոցներ կունենան ժողովրդական աղէտների գործան անելու։ Իսկ մինչեւ այդ հեռանկարի իրականացումը, ելի պիտի դորձել, եռանգը կրինապատկել, չպէտք է թողնել, որ ծառի արմատը ոկտի փոտել...

Ահա այստեղ է, որ գաւառական ինտէլիգէնցեայի պահանջ է զգացւում, այդ ինտէլիգէնցեայից ոյժ ու եռանդ պահանջւում։ բայց ուր են գործար ինչու միմիայն դէպի կենտրոններն են ձգտում և կենտրոններում խմբւում։ Այժմ իոկ ժամանակն է նարօդնիկի ցուպը ձեռք առնելու, այժմ իոկ միջոցն է գիւղական սառած տարրը ջելմացնելու։ Գաւառական ինտէլիգէնցեան պէտք է շատ աւելի լայն նայի իր կուլտուրական գործունէութեան լրայր նա չպէտք է բաւականանայ իւր մասնագիտութեան պաշտօնով, նա պէտք է տարածէ իւր գործունէութեւնը շարքը, ամեն կողմ և որ ամենագլխաւոր է պէտք է համերաշխ գործունէութեւնը ունենայ։ Գիւղախտաբար համերաշխութիւնն է, որ ամենից առաջ պակասում է գաւառում և կարծես թէ մեր բարձրագոյն համարուած գպրոցների կրթութիւնը հէնց այս համերաշխ գործունէութեան չէ նպաստում։

Գիւղական ցաւերի երկու խոշոր արմատների՝ գպրոցի և քժշկութեան մասին խօսելիս, չի կարելի լուելեայն անցնել և հայ կնոջ աւնենալիք դերի մասին մեր ժողովրդական քաղաքակրթական գործում։ Եթաւ, ինչքան մեծ ոյժ և զարկ կարող է տալ հայ կինը կուլտուրական այդ գործում։ Գիւղախտաբար հայ կինն ևս վարակուած է կենտրոններում համախմբուելու տենչով, կենտրոնների գպրոցներում պարփակուելու ցանկութեամբ, թէև նորա հասարակական գործունէութեան ասպարէկ, ձգտելը աշ-քի ընկնելու չափ պարզ է։ Թէպէտ և ամեն մի տեղ մեր մատաղ սերնդի կրթութիւնը հայ ինտէլիգէնտ կնոջ խնամու ձեռքն ևս անցնելը հասարակութեան շահն է, բայց և այնպէս, հայ կինը, գործելու տենչով վառուած իւր հայեացքը պէտք է դէպի հայ գեղջիկ մութ խճճիթը, գէպի իւր քոյը գեղջկուենու խաւարապատ հոգին, դէպի հայ գիւղը գարձնէ, ուր իւրաքանչիւրի սիրտն ու հոգին գուցէ նոյնչափ կոշտ ու բերտ է, որչափ և բան ըրչին սովորած գիւղացն ձեռքը, բայց կուսական այդ սիրտն ու հոգին զգայունն է և պարարտ։

Եթէ ֆինն կանայք ոչ մի միջոց չխնայելով, իւրեանց նեարդերի գնով ու սրտի բախմամբ, կուրծքը դէմ տուած կռուեցին և հասարակական իրաւունքներ ձեռքը ըերին, միւնոյն ժամա-

Նակ նոքա և շատ շուտով ապացուցին, որ արժանի էին այդ իրաւունքներին։ Հապա մերո՞նք, հապա հայ կի՞նը։ շի՞ ուզում արդեօք հայ կի՞նը ապացուցել, որ ինքն ևս արժանի է հասարակական տրիբունի, յառաջընթացի մըտենուն...

Ա. Մ.



ՄԱՆՐ ԼՈՒՐԵՐ

— Թիֆլիսում բժշկապետ Բ. Նաւառարդեանի նախագահութեամբ կազմուած է մի մասնաժողով, որ ծրագիր է մշակում «Աղբեւը» մանկական հանդիսի 25 ամեակը գալ աշնանը ըստ պատշաճի հանդիսաւոր տօնելու։

— Փետրուարի 8-ին Կահիրէում, մեծ շքով ու խուռն բազմութեամբ, մասնակցութեամբ Մկրտիչ ծ. կ. Աղաւնունու, Պողոս փաշա նուբարի, Երուանդ բէյ Աղաթօնի և այլոց, հողին է յանձնուել Արփիար Արփիարեանի մարմինը։ Թէ եկեղեցում և թէ գերեզմանի վրայ խօսուել են շատ գամբանականներ։ Դագաղը ծածկուած է եղել 24 ժաղկէպսակներով։

— Փետրուարի 22-ին Թիֆլիսում, «Աղբեւը—Տարագ»-ի խմբագրատանը գումարուել է տեղական ոռւս, հայ, վրացի և թուրք լրագրերի 20 ներկայացուցիների ֆողովը, կազմելու ժուրնալիստ—գրողների մի միութիւն։ Հարցի վերջնական լուծումը թողնուած է մի աւելի մեծ ֆողովի, որ պիտի գումարուերի ընդհանրապէս գրողներից մօտ ապագայում։

— Պետերբուրգում կազմուած է մի մասնաժողով, որի մէջ մտնում են Մ. Կովալէփեկիյ, Կորոլէնկօ, Ռէպին, Ստախովիչ, Լ. Անդրէէվ, Արուէնեէվ, մշակում է մի ընդարձակ ծրագիր առաջիկայ օդոստոսի 28-ին լրանալիք և Տոլստոյի 80-ամեայ յոթելեանը շքեղօրէն տօնելու համար, տալով այդ յոթելեանին ոչ միայն համառուսական, այլ և համաշխարհային բնաւորութիւն։

— Մարտի 25-ին լրացաւ Երկրիս փոխարքայի դինուորական ժառայութեան յիսնամեակը, ու տօնուեցաւ Թիֆլիսում շքեղօրէն։ Հետեւալ համարում կտանք նկարագրութիւնը։